105. Մէկ օր էլ Սանասար տիւս էկաւ ձիւր թամելու, նոր մտկի մէջ ասաց.—Ես իրիշկեմ յըմ ախպօր ամբ, տեսնայնք, ի՞նչպէս ա: Իրիշկաց, ամբը մթներ էր, էլ լէօս չը կար ամբի մէջ, էլաց, էկաւ տուն: Քեռւխէր խարցնեց, ասաց.—Սանասար, ընչի՞ կը լաս:

—Քեռւխէր, յըմ ախպօր ամբը մթներ ա. ես տէրթամ:

Ասաց.—Այ ջանըմ, վա՛յ կաց: Քեօ ախպէր մկայ ըռւահաթ նստէ ինոր մօր մօտ, կը խնդանայ. տիւ էլ մե խնդացիւ:

106. Սանասար քեռւխօր չը լսեց, էլաւ էկաւ մօր մօտ:

Մէր ասաց.—Ընչի՞ էտա ցեղ վռաղ էկար:

Ասաց.—Մարէ, յըմ ախպօր ամբ մթներ էր, ես էնոր ապէօվ վռաղ էկայ: Մարէ, ո՞ւր ա Բաղտասար:

Ասաց.—Էսօր մէկ ամիս կայ, Բաղտասար Աջմու թակեաւոր կանչեց խարսնիս, հըլա չիկե: Դէ նստի ըռւահաթի, խաց կի, քիւ ծինը տանենք զատ տայնք:

107. Ասաց.—Չէ, խաց չըմ ուտի, ծիուց էլ չըմ իկեայ տակ. յըմ թուր, յըմ գուռզ պի, ես տէրթամ.

Մէրը ասաց.—Ես չըմ կենայ քիւ գուռզ պիրի, քիւ թուր պիրի:

Ասաց.—Մարէ, տիւ ծիու կլէօխ պռնի, ես տէրթամ պիրեմ:

108. Մէրը ծիու կլէօխ պռնեց, Սանասարը կնաց իպի ծինը, խեծաւ, կընաց քեաղքի մէջ, կան էկաւ, տեսաւ, որ ճոչ տեղմ, փուշ, փալաշ էտ տեղն ա. մէ քիչ կայնաւ, տեսաւ, որ կը պանցրանայ, կը ցածրանայ. ծիուց իջաւ, էտ փուշերը էթալ տէն, ասաց.—Յըմ ախպէր ըսպանիր էն, խորիր էն էտ փշերի տակ. փշեր էթալ դէն, տեսաւ, որ դըռուստ ինոր ախպէր փշերի տակ: Ախպէր խանեց, իտի ծիյիւ վերէն, տարաւ տուն. պարկացուց շորերի մէջ, ախպօր մէջ շունչ կէր, ասաց.—Էրթամ կռւեմ, վախենամ յիմ ախպէր մեռնի, լեզուի ծէն չառնեմ. մնամ մըտ յըմ ախպէր, տեսնամ ինչըլի կըլնի, նոր էրթամ կռւի: Մնաց մինչև խըլըսուն. սարխօշութիւն էթող ախպօրից, ախպէր էլաւ նստաւ:

109. Սանասար ասաց.—Ախպէր, ի՞նչ էլաւ քե, տիւ էտա ցեղ էլար:

Բաղտասար ասաց.—Ես անոշ քներ էր, տիւ ընչի՞ ձի քընիւց խանիք վե, էս անոշ շօրերի մէջէն:

Սանասար ասաց.—Որ ես քե չը խանէր վե, տիւ կը մեռնէր:

—Ընչի՞ կը մեռնէր:

—Ապա քեզ խմացրիր էն, տարած էն, պարկացրած էն էն փոսի մէջ, փուշեր լցիր էն քիւ վերէն: